ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Նախնական զինվորական պատրաստություն

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԹԵՍՏԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ուղեցույցում ներկայացվում է ուսուցչի ատեստավորման թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, դրանց նմուշ-օրինակները, պատասխանների գնահատման չափանիշները, առաջադրանք-ներում ընդգրկվող նյութի շրջանակները:

Թեստավորումն անցկացվում է համակարգչային եղանակով, տևողությունը՝ 180 րոպե:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 60 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 հիմնական տեսակները՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ:

- **Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

  Այս առաջադրանքների համար տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ճիշտ պատասխանի դեպքում առաջադրանքին տրվում է 1 միավոր:

  Կարճ պատասխանով առաջադրանքներ
  Այս առաջադրանքներում տրվում են 7 պնդումներ, շարքեր և այլն, որոնցից պահանջին համապատասխանում են մի քանիսը: **Ճիշտ պատասխանների քանակը հարցադրման մեջ չի նշվում:** Առաջադրանքին տրվում է 1 միավոր, եթե ճիշտ են նշված պահանջին համախատասխանող բոլոր միավորները:

-

Կարճ պատասխանով առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է նշել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ և լիարժեք պատասխանը: Սխալ, թերի կամ ոչ ամբողջական պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Տեսակ	Քանակ	Միավոր
Ընտրովի պատասխանով	45	45
Կարճ պատասխանով	15	15
Ընդամենը	60	60

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ընտրովի պատասխանով

Որքա՞ն է նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 2 մեծ և 1 փոքր բաժանքներով և գտնվում է 400մ հեռավորության վրա: (1 միավոր)

1) 6մ
2) 8մ
3) 10մ
4) 12մ

Կարճ պատասխանով

Ովքե՞ր *չեն* զբաղեցրել զինվորական նախարարի պաշտոն Հայաստանի առաջին հանրապետությունում: (1 միավոր)

1. Գարեգին Նժդեհ
2. Դրաստամատ Կանայան
3. Ռուբեն Տեր-Մինասյան
4. Արամ Մանուկյան
5. Արշակ Ջանփոլադյան
6. Հովհաննես Հախվերդյան
7. Անդրանիկ Օզանյան

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար որպես հիմք են ընդունվում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը, չափորոշիչները և գործող դասագրքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք, մաս 1, Ընդհ. խմբ.՝ Վ. Օհանյան, Ս.Մարգարյան և ուրիշներ, Երևան, Աստղիկ Գրատուն, 2019
2. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի դասագիրք, Ընդհ. խմբ.՝ Վ. Օհանյան, Ս.Մարգարյան և ուրիշներ, Երևան, Աստղիկ Գրատուն, 2020
3. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք, Ընդհ. խմբ.՝ Վ. Օհանյան, Ս.Մարգարյան և ուրիշներ, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017
4. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք,Ընդհ. խմբ.՝ Վ. Օհանյան, Ս.Մարգարյան և ուրիշներ, Երևան, Աստղիկ Գրատուն, 2017
5. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի դասագիրք՝ Ա.Դալլաքյան և ուրիշներ, Երևան, Աստղիկ Գրատուն, 2024
6. Նախնական զինվորական պատրաստություն, Հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի դասագիրք՝ Ա.Դալլաքյան և ուրիշներ, Երեւան, Աստղիկ Գրատուն, 2024

Ծանոթություն: Գրականության ցանկում չնշված որևէ այլ աղբյուր չի կարող հիմք ծառայել բովանդակային բողոքարկման համար: